նալու համար. 1303 թուին տեսանք, որ նա իրեն վարդապետ է անուանում, իսկ Յովհաննէսին վարժապետ։ Զորս տարի յետոյ՝ 1307 թուին կրկին նա Մեծոփումն էր, երբ Աւետիք քահանայի համար մի Աւետարան գրեց. իսկ մի տարի յետոյ մի Նարեկ «ի թուի հայոց ՉԾԷ յանապատիս Մեծոփայ վանս առձայնելոյ» «յառաջնորդութիւն տեղւոյս Սարգիս եպսի.»։ Այստեղ նա մնաց մինչև իւր կեանքի վերջը՝ 1337 թուականը, արդիւնաւոր հանդիսանալով իւր վարդապետական-մատենագրական աշխատութիւններով, նաև իբրև «քարտուղար ճարտար, գեղեցկագիր և ստուգաբան» ձեռագիրներ էր պատրաստում և աշխատա-



Պատկեր 205.

վարձը աղքատներին և կարօտեալներին բաժանում. եղել է և մանրանկարիչ, բայց նորա գործերից մեր ձեռքը չէ հասել. «Զի յոյժ վարժ գոլով և ի ծաղկազարդ նկարակերտութիւնս գրոց»։ Մեծոփումն նորա գործակիցն էր Ստեփանոսը «հոգևոր հարազատ նորին»(*)։

Յովհաննէս Երզնկացին 1306 թուին գրել է Յովհաննու աւետարանի մեկնութիւնների մի ժողովածու (Ստեփանոսի Սիւնեաց, Նանայի, Անդրէի և Արեթաս եպիսկոպոսաց Կեսարու Կապադովկիոյ) սքանչելի բոլորգրով, թղթի վերայ. չկայ յիշուած գրչութեան տեղը, բայց անկասկած է, որ Գլաձորումն է գրուած ուր նա ապրում էր այդ ժամանակ. (Ցաւել. 78, Ձեռ. Էջմ. № 2520. 344ա)։

Տիրատուր Կիլիկեցին 1309 թուին գրել է մի նկարազարդ աւետարան «ի մեծ դպրատանս, որ կոչի Գալիձոր ի վարժապետութեան. մեծիս Եսայիայ եւ եռամեծին Դաւթայ» (պատկ. 207)(*)։ Այստեղ յիշատակուած Դաւիթը Նշեցու օգնականն էր իբրև վարժապետ. ստորագրել է Նշեցու հետ նաեւ ընդդէմ Անաւարզեցու ձեռնարկին 1295 թուին։ Սորա նախնական կեանքի մասին տեղեկութիւն չունինք, բայց նոյն պիտի լինի այն Դաւթի հետ, որին յիշում է Գրիգոր գրիչը Առաքելոց վանքում 1275 թուին՝ Ներսէս Մշեցու համար գրած Փիլոնի հնգամատեանի մեկնութեան յիշատակարանի մէջ, «մեր վդպետ.» անուանելով, որ ապա 1280 թուին Նշեցու հետ հետեւել է Ներսեսին դէպի Գլաձոր, Ներսեսի մահուանից յետոյ օգնական հանդիսանալով Նշեցուն դպրոցի ղեկավարութեան գործում(**)։ Նորա աւագութեան ըստ հասակի կամ ձեռնադրութեան, բայց ոչ նոյն չափով հեղինակութեան ապացոյց է տալիս Կիւրեղ գրիչը 1321 թուին գրած աւետարանի յիշատակարանի մէջ, թուագրելով «եւ ի վարժապետութեան սուրբ եւ բազմերջանիկ հաւատոցս հայոց, երկուց ամոլոց ճշմարիտ հաւատոց մերոց Դաւթի եւ Եսայեա ի հաշակաւոր եւ սուրբ մենաստան համալսարանիս Գլաձորոյ եւ ոնձընկալ վերասացեալ դպրապետացս»(***)։ Մի քանի տարի յետոյ այս աւետարանն անցնում է Դաւիթ վարդապետի ձեռքը և նա իւր մակագրութեամբ նուիրում է Սպիտակաւոր Աստուածածնի առաջնորդ Մկրտիչ վարդապետին. «Նուաստ ի շարս ուսուցչապետաց Դաւիթ շնորհեցի զսուրբ աւետարանս սուրբ Աստուածածնին եւ առաջնորդի սուրբ անապատին Մկրտչին հոգեւոր որդեկին իմոյ ի յիշատակ հոգւոյ իմոյ»։ Նա մասնակից էր նաև Սիւնեաց եպիսկոպոսների (Յովհաննէս-Աւրպէլ և Ստեփանոս-Տարսայիճ), Գլաձորի և ուրիշ վանքերի կողմից Անաւարզեցու և Կոստանդին կաթուղիկոսի նորամուծութիւնների դէմ մղուած պայքարին. այս մասին յետոյ։ Բրիտանական թանգարանի ձեռագիրներից մէկը՝ Վարդանի Աղամոսի մեկնութիւն՝

(*) Անդ. 167։ Նարեկի յիշատակարանից օգտուել ենք Հ. Ներսէս Ակինեանի արտագրութիւնից. Նարեկը գտնուում է Սարդարաբադ գիւղի եկեղեցում։ Իսկ Աւետիք քահանայի համար գրուած աւետարանի յիշատակարանը տ. Լալայեան, Ցուցակ Վասպուրականի. 1915. 154։

(*) Ձեռ. Էջմ. № 3393։ Այս յիշատակարանը արտագրութիւն է և ոչ բնագիր Տիրատուրի գրած աւետարանի, որ մի ժամանակ գտնուում էր Երնջակի Ս. Կարապետի վանքում. տես Սեղրակեան, Հնութիւնք Հայրենեաց, Արարատ, 1872, 150։ Առանձին գրքով էս տպուած։ Պատկեր 207ի գիրը նման է բոլորովին Ձեռագրի երկրորդ ստացողի գրին, որ իւր յիշատակարանն ունի 122բ — 123ա։

(**) Ձեռ. № 3932. (Ցաւել. Բ. 61)։

(***) Փիրղալէմեան, Նշխարք Հն. անտիպ։ Conybeare. Catalogue Arm. Manuscr. 1913, London. եր. 22. (Ցաւել. Բ. 23)։